

ՊԵՏԵՍԻԱՆ ՊԵՏՐՈՍ ՍԻՄՕՆԵՆՆԵՐԻ

Չեր այս տարուայ Սեդուի 43 համարի մէջ մեզ վերայ գրածի դէմ (ասումեմ ձեր, որովհետեւ ձեր լրագիրը միայն ձեր և մի քանի անձանց կրքերին է ծառայում) մենք թեպէս չենք կամենում պատասխանել, կամենալով արհամարհել ձեր ասածները, բայց որ չեցէ մեր լռութիւնը ձեզ համար յաղթութիւն համարէք, ինչպէս սովորէք համարել Մշակ լրագրի արհամարանքի զանցառութիւնը, մենք կ'աշխատենք այս անգամն էլ ստենք ձեզ, թէ և ձեզ համար այսպիսի բաները փլաւ ու չաւեն դառնել:

Չեր տեսչի պաշտօնակատարութեան համար Վերսիսեան դպրոցումը առաջարկեց առաջուայ տեսուչ պ. Վաղարշապետը և հոգաբարձութիւնը, հաւատ ընծայելով սորան, նշանակեց ձեզ իրաւ առանց ձեր թղթի, բայց բոլորովին համոզուած լինելով, որ դուք ևս ցանկանում էք այդ պաշտօնը: Հոգաբարձութիւնը սխալուեցաւ, տեսնելով որ դուք եսականութեանը էք ծառայում, և վասնորոյ աշխատեց ձեզ ձանապարհ ցոյց տալ այդ պաշտօնից: Այո, երբ հարկաւոր է ձեզ կանոնադրական լինել, դուք կանոնադրական էք, իսկ երբ հարկաւոր է եսականութեանը ծառայել դուք եսական էք, ինչպէս կրկնեն այսպիսի անձին, դուք ինքներդ լաւ գիտէք:

Դուք առաջարկեցիք աւելացնել տեսչի ուժերը, ոչ թէ նրա համար, որ հոգաբարձութիւնը մտադիր էր մի այլ անձն հրաւիրել, որովհետեւ այն ժամանակ նա բոլորովին համոզուած էր ձեր եսականութեան գործիք լինելուն, այլ նորա համար, որ դուք ինքներդ սպասում էիք այսօր կամ վաղը տեսուչ դառնալուն, բայց տարաբախտաբար չ'յաջողուեցաւ ձեզ և ձեր բրթաց բաժինը ընկաւ ուրիշին:

Չեզ առաջարկեցին հոգաբարձութեան անդամակցութիւն իբր պաշտօնակատար տեսչի, որովհետեւ համաձայն 10 յօդ. կանոնադրութեան տեսուչը նոյնպէս համարուիլով անդամ, և ոչ թէ ունէին այս և կամ այն դիտաւորութիւնը, որին իբր թէ դուք չէք կամեցել ենթարկվել:

Նրբ որ մի մարդ իրան համար ոչինչ ասելու չունի դէպի լաւ, իցէ բացի մի քանի չնչին բաների, ի հարկէ, պէտք է լինի, ասելով, որ նա չէ կամենում ուրիշների պէս անձնագրութեան ախտին ենթարկուել: Մենք ոչ թէ մեր անձնագրութեան համար ասացինք մեր արածները, որի համար երբէք էլ չենք յիշել, թէ և իրողութիւններին շատեր կատարուել են վաղուց, այլ նորա համար առաջ բերինք, որ դուք ամօթեցիք համարել մեզ հետ համեմատուելու, իսկ մենք սոցա հիմանց վերայ պնդում էինք հակառակը ձեր խօսքերը հերքելով: Դուք աշխատում էիք ցրել մեր արածները ձեր լարած որոգայթներով, բայց մենք կաշխատենք ստել ձեզ մեր ունեցած փաստերով, որի մասին դուք ևս չէք երկբայում, բայց որ բանը ընկել է այս տեղ, հարկադրած ստեր էք խօսում մեր դէմ:

Վախկին սէրը ու միաբանութիւնը ուսուցչաց մէջ չ'կայ նորա համար, որ դուք կամեցաք ռազմութիւն ձայնի ծառայեցնել եսականութեանը, որից և առաջ եկան բոլոր երկպառակութիւնները: Չեր լարած որոգայթները այնքան զոգուելի գտնուեցան, որ բոլոր համալսարանում աւարտած ուսուցիչները բացի մէկից, որն-որ Սեդուի ընկերութեանն է պատկանում թողնել և դուրս գնացին: Ստաբիլացէք, պ. Սիմօնեանց, վերակացու և ուսուցիչ փոխառանցի հոգաբարձութեան մէջ յայտնած բողոքը, որ նա հալածանաց տակէ ընկել ձեր մէջ կազմած ընկերութիւնից, որովհետեւ նա հոգաբարձական առաջարկած թղթին, որ վերակացուները իրանց պաշտօնին հսկելու համար վերակացութեան ժամանակ դասեր չ'ունենան և այլն, համաձայնութիւն է ստորագրել հակառակ ձեր պահանջման, և այնպէս ձեզ և ձեր նմաններին համարեցէք բարեկամ ուսումնարանի: Վախագահը և նորա հետ, ի հարկէ, ձեր սարքած ձայնի ռազմութիւնը, եթէ չ'համարէր ձեզ, վաղուց պէտք է առաջարկէր ձեզ և ոչ թէ պ. Սիմօնեանցին թողնել ուսումնարանը, որովհետեւ եթէ այս վերջինի գլուխ չ'տալը տեսչին կարողէր անբարոյական համարվել դպրցի մէջ, ապա ուրեմն որքան աւելի անբարոյական պէտք է համարուէին այսքան ձեր անտեղի գրուածները և արածները հոգաբարձուած դէմ:

Մենք միշտ եղել ենք ոչ թէ հակադիմադրական

կան, որովհետեւ առանց հոգեորականների մեզ մեր աղ-գութեան համար ոչ մի ասպարէզ չ'կայ, թէ և մեր կարծիքով, ընդհանրապէս ասելով, բոլոր նրանց դիտութիւնը սկսում է ուղղականով և վերջանում ներգոյականով այլ եղել ենք և մնացել միշտ հակառական որի դէմ թէ և եղե պատերազմը և մի քանի տարի յաղթութիւնից յետոյ շարունակուեցաւ այս վիճակը, բայց վերջի տարիքը սկսաւ տիրել ուսումնարանումը եսականութիւնը, մինչև անգամ հոգաբարձու Տէր Թադէոս քահանայ խոջեյնութեանցը վերկացաւ և դուրս գնաց նիստից, ասելով: «Աւրեմն ես աւելորդ եմ», երբ նրան նախագահը հրամայեց լռել իրան հակառակ խօսելու համար երգեցողութեան դասերի մասին և երբ որ ինքն Տէր Թադէոսն էլ լաւ երգեցողներից մինն է: Վոյնպէս պատահեցաւ և մեզ մէկ հարցի ժամանակ, երբ տեսանք այսպիսի եսականութիւնը, որի դէմ սառնասիրտ ռազմութիւնը խոնարհուել էր: Այս պատճառաւ թէ և տուինք մենք արձակման թուղթ, բայց այս թուղթը էլ յետ վերադառնալ, հոգաբարձուած և իրան նախագահի խնդիրքը յարգելով, ի հարկէ, պ. Սիմօնեանց, մեր կողմանէ ձեզ ինտրիգներ կերեան մեր աշխատութիւնը բնարութեան ժամանակ հակառակական անդամները բնարելու համար, որովհետեւ մենք չենք այն, ինչ որ դուք էք:

Դուք էլ ինչ կրկնում էք այն, ինչու դէմ մենք արգէն խօսողանք ենք, քի որ փոխանակ թէ միտակցութիւնը սխալմամբ գրվեցաւ Մեղիաղ, բայց մի թէ դուք, ուսուցիչ լինելով պատմութեանը, մինչև ցայսօր չէք գիտում, որ պատմութեան մէջը նշանակութիւն ունին ոչ թէ անձանց անունները, այլ նրանց գործողութիւնները և նրանց հետ առաջ եկած հետեւանքները դէպի լաւ և կամ թէ վատը, որ մարդս եղած փորձառութիւնները կարողանայ ծառայեցնել իրան: Վէճքսանդր Մակեդոնացին է մեծամեծ յաղթութիւններ արել, թէ Մարտիրոսը, այս ամէնքիս համար միևնոյն է, բայց թէ սա և կամ նա ինչ են արել և արածից ինչէ հետեւացել, ահա այս է պատմութեան հարկաւոր հարցը մարդկութեան համար: Մենք չ'գիտացինք, ինչպէս ասում էք, այն ևս ինչ որ երկրորդ դասաւան մէջ գիտեն, երբ որ այսպիսի անուանագիտութեանը մի կոպէկի արժողութիւն էլ չենք տալի, բայց ինչ ասենք այնպիսի անձին, որ ինքն պատմութեան դասաւան է և հարցաքննութեան մէջ զէրօ է ստանում: Այո, կարծեմ, մի փոքր աւելի է, քանց թէ միտակցութիւն և Մեղիաղի անուանախարնութիւնը: Մենք թէ միտակցութիւն ասածը առաջ բերինք, ոչ թէ մեր առարկան նորա առարկայի հետ համեմատուելու, ինչպէս աշխատում էք դուք ձեռնկրպակ մեր գրածը, այլ նորա համար, որ արդարեւ անկեղծ զգացմունքը գործի մէջ դէպի որեւիցէ հասարակական հարցը մոռացնում է մինչև անգամ իրա անձնական փնտր և մարանչել է տալիս արդարութեան համար, թէ և լինէր այս մի չնչին գործ—նա մանաւանդ, որ Սողանլուի ուսումնարանապետական այգին կապալաւ տալու հետ ութ տարի ժամանակաւ կապած էր ոչ թէ տարեկան 10 և կամ 20 մանէթ, ինչպէս գրում էք դուք, այլ և իսկ նոյն այգու գոյութիւնը և կամ ջնջվելը: Այո Չեզ նման մեկնող և թափառական շրջող անձինք կարողեն մտածել այսպէս և, շրջելով այս և այն այնիկների մէջ, մուրտուել ամէն տեղ ինչպէս օխտը կարաս մուրտուող մուկը:

Մեր ասած իրողութիւնից յետոյ, այնէ, որ ոտքի կանգնացրիք բոլոր ուսուցիչներին պահանջել վարձատրութիւն չտուած դասերի համար, դուք թէ և մի քանի մանէթներից ձեռք վերառաք, այն է չ'այոց պատմութեան դասերի համար, ասելով, որ դուք արգէն ստանում էք տեսչական պաշտօնի համար, որի հետ իբր թէ կապած է և այս դասատուութիւնը, բայց այս արիք դուք երկու պատճառաւ: մինը ձեր արածը ուղղելու և ծածկելու 25 ուրբլու անձունի պահանջողութեան մասին և երկրորդ հոգաբարձուաց սիրտը առնելու տեսչի պաշտօնը աչքի տակ ունենալով, որպիսի շոգոքորդութիւն հոգաբարձութիւնը շատ լաւ հասկացաւ: Այսպիսի պահանջը այժմն էլ կասենք ոչինչ հետ չենք կարող համեմատել եթէ ոչ ինչի հետ: Այլ կրկնում ենք, դուք չէիք տէր և ոչ կարողէիք համարել ձեր պահանջած փո-ղերը ձեր սեպհականութիւն, երբոր վարձատրութիւնը,

ուտով սուտեք, պ. Սիմոնեանց, որ դուք 1872 թուին գրելէք Լեւոնեանցին իբր թէ հոգաբարձութեան յանձնարարութեամբ, ասելով որ մեր հրաւերքը միայն մեզանից է ոչ թէ հոգաբարձութեանից է եղել, երբ որ վերոյիշեալ նոյն տարւոյ ընդ №156 և 43 գրութիւնները պարզ ապացոյց են ձեր ստութեան. ի դուք տեղի էք աշխատում հաւատացնել, որ դուք կամենում էք նորա գալը, որովհետեւ ձեր բերանից լսող կայ, որ նա եթէ գայ, իբր թէ իրա մօրպէս խարդախ կ'ընէ, իսկ մենք ձեր համախոհներից մեկից-այն է Ս. լսելէնք: «Ննչպէս հրաւիրենք նրան և տեսուչ շինենք իրա վարժապետների վրայ:» Կոյնպէս խարդախ էք և այն գործումը, որ դուք Լեւոնեանցից որպէս թէ ձեր անուամբ ստացելէք հեռագիր, երբոր հեռագրի հասցէն, ինչպէս հաւատացնումէ հեռագրութեան գործի մէջ ծառայող հոգաբարձու պ. Լ. Կիմենցը, իբր թէ չէ եղել պարզ, որպիսի հասցէն, հանգամանքին նայելով, աւելի պարզ կ'ընէր դէպի մեզ, իբր դէպի նրան գրող անձին, և կամ թէ ուղղակի դէպի հոգաբարձութեանը, քան թէ դէպի ձեզ: Գուք այս հեռագիրը ներկայացրէք մեր հոգաբարձութեանը միայն մեր բազմիցս կրկնած պահանջմամբ պ. Հարութեանցի բերանով երկու շաբաթից յետոյ, երբ որ իմացանք, և ոչ թէ իսկոյն առաջի նիստին, երբ ստացաք: Զիցէ վերջի քի 1874 թուի հեռագրի պատասխանն էլ անպարզ հասցէի պատճառաւ ստացած լինէք և մոռացած էք ներկայացնել, որովհետեւ նա առանց պատասխան չէր թողնի մեզ տեսնութեան հարցի մասին: Եւ, պ. Սիմոնեանց, մենք այս օրերս էլ հաստատ աղբիւրից (նամակ № 8-էն նոյեմբերի այսր 1875) ճիշտ տեղեկութիւն ստացանք, որ մեր և մեզ հետ միուս հոգաբարձութեանի այս տարւոյ 29 օգոստոսի վեհաժողովի կաթողիկոսին ուղղած հեռագրին էլ միւս օրը ստանալուց յետոյ պատասխանել են նոյնպէս հեռագրով, որ կոնսիստորիայի կարգադրութիւնը Տէր Սուշուք-Սահանյի հեռացնելու մասին հոգաբարձական պաշտօնից օրագրով Սիմոնի արդէն անվաւեր է համարուած և ուրեմն ունի նա իրաւունք անդամակցութեան, բայց այս հեռագրին էլ անհետացել է մինչև ցայսօր, ինչպէս անհետանումէր, եթէ չպահանջէինք, և վերոյիշեալ հեռագիրը, որն որ դուք իբր թէ հասցէի անպարզ լինելու պատճառաւ ստացելէք: Համաձայնեցէք, պ. Սիմոնեանց, որ այսպիսի իրողութիւնները չեն կարող մնալ առանց հետաքրքրութեան: Եւ չէր լռէիք, քան թէ տեղիք ապիք մեզ յերեւան հանել այսպիսի ճշմարտութիւններ:

Ի վերջոյ ինչ էք ուղղում ասել համբերներու մասին մեր և ուրիշների գրուածներ առաջ բերելով: Եթէ կամենումէք ձեր անհանգիստ բնութեամբ ժողովուրդը գոգոնել մեր դէմ, դուք հաւատացած կացէք, որ նա մեզ մեր գործքերով շատ լաւ ճանաչում. Եթէ ասէինք էլ լաւին լաւ և վատին վատ, մի թէ մենք կ'մեղանչէինք խղճմանաց դէմ, իսկ եթէ կամենումէք կատարել մատնողութեան դեր, այդ մինչև ցայսօր մեզ անյայտ անտով շնորհաւորումներ ձեզ:

Որ ինչ կ'պատկանի մեր խօստացած յօդուածին մեր եղբոր կտակի մասին, որի համար էլ նորիցս յիշումէք, երեւի չունենալով ոչինչ ձեր Սեդուի թերթերը Լեւոնեանցին, մենք հարկաւոր ենք համարում ասել, որ մենք արդէն քաղելէնք հարկաւոր տեղեկութիւնները դատաստանական գործերից և սպասումներ ձեր խմբագրութեան ընկեր Լ. Կապետեանցի այս տեղացի երաժշտական սենեակումը և կլասիկական գիմնադղայումը մեզ երկու անգամ խօստացած Սեդուի այն համարներն, որոնց մէջ խօսվել է մեր դէմ այս կտակի մասին, որ կարողանանք ձեր առաջ բերած զրպարտութիւնները մէկ մէկ ջրել, որովհետեւ ում որ դիմեցինք, ողջով էլ ասացին, որ նրանք արդէն վաղուց գործեն դրել բոլոր Սեդուի թերթերը իրանց վայելուչ տեղերը:

Պատասխանելով ձեզ ոչ թէ միայն խօսքերով, ինչպէս պուք սովորեք մրտաւել թերթերը, այլ փաստերով և մանրամասն հանգամանքներով, մենք հարկաւոր ենք համարում յայտնել ձեզ մեր գոհանականութիւնը, որ դուք առիթ տուէք մեզ պարզել մի կողմանէ ձեր անհիմն հերքած իրողութիւնները և միուս կողմանէ ձեր ուղ լինելը, և այսուհետեւ, բացի մեր եղբոր կտակի մասին, չունենք ոչինչ խօսելու ձեզ հետ, որովհետեւ անարժան ենք համարում շարունակել ձեզ հետ, իբր ստախօսի հետ, որ և իցէ հակաճառութիւն:

Ի 4-ն գեկտեմբերի 1875 ամի ի Տփլիս:

Տփլիս: Գր. Իզմիրեանց:

ՊԵՏԵՍԵՆՆ ԵՄԻՆԵՆ ԼԵՎՈՆԵԱՆՑԻՆ:

Ձեր գրածը մեր դէմ միև նոյն Սեդուի № 43-ումը մենք կարգադրել ենք և արտասուածներ, որ դուք էլ ընկիւնք Պետրոս Սիմոնեանցի ոտայնը. թէ ոճից և թէ ձեր ասածները սրա ասածների հետ համեմատութեանից և վերջապէս մեր ունեցած տեղեկութիւնից բոլորովին համադրուած ենք, որ ձեր բոլոր գրածը իրան Սիմոնեանցի շարադրութիւնն է և խորամանկութեամբ ձեռք բերած է ձեր մտերիմ բարեկամ պ. Պ. ձեռքով: Որ դուք հայէրէն չըզդիտէք և մինչև անգամ անգրագէտէք, որ թէ այդպէս շարադրէք, այն էլ ձեզ բոլորովին անհասկանալի ոճով, և ստորագրէք, այս դուք էլ կըխոստովանիք. Գուք գործիք էք դառնել ոչ թէ ձեր ամուսնոյ Յովսէփ Լեւոնեանցի յիշատակը պատուելու, այլ պ. Սիմոնեանցի ստախօսութիւնը արդարացնելու մեր դէմ, բայց որ մենք միշտ նրա յիշատակը պատուելենք և գոթաանութեամբ թէ մեր կրտակակատարների 1872 թուին տպած գրքոյիով ամեն տէրութեանց մէջ բաժանելով և թէ զանազան ժամանակ համբարներով գերեզմանը օրհնելով պայծառացրել ենք այնպէս, ինչպէս ոչ մէկ բարերար ննջեցեալ թիֆլիզցումը չէ պայծառացրած, ապացոյց են նոյն իսկ իրողութիւնները:

Սենք ասելենք, որ մենք առանձին աշխատութիւն ենք քաշել ձեր ամուսնոյ կտակի մասին և խորհուրդ ենք տուել տալ մասնաւոր անձանց բաժանելու փողերից յետոյ մնացեալ գումարը դպրոցին և ոչ թէ հարկադրել ենք և կամ թէ ստիպել ենք, ինչպէս գրում էք դուք, և մի թէ այս իրողութիւնը ճշմարիտ չէ, որի ապացոյցները յիշած ենք վերելք պ. Սիմոնեանցին տուած պատասխանի մէջ: Սեր ձեռքին եղած նրա հին կտակը աւելի ապացոյց է սորան:

Բայց որ դուք, և ոչ թէ մենք, կամեցելէք ոչ թէ նրա յիշատակը նուազացնել ձեռք գցելով ուսումնարանին ընծայեաց գումարի մասն, այլ և անհանգիստ առնել հանգուցելոյ գերեզմանը, սրան ապացոյց են այն իրողութիւնները, որ դուք և ոչ որ և իցէ կտակի մէջ յիշած անձն բացիք դատաստանական վեճ, պահանջելով մեզնից (ինչպէս պարզ երևումէ Տփլիսու պօլիցիու ի 14-ն մարտի 1867 թուին № 907 գրած թղթից և Տփլիսու օկրուժնոյի դատարանի ի 18 փետրվարի 1867 թուին ձեր տուած գանգատից) մի կողմանէ Լազար Խարազովի վրայ կորած 1836 թ. 37 կ. որ դուք ստացաք մեզնից նրա ձեր ամուսնուն տուած ձեռագրով, ասելով, որ մենք ձեզ փողով պէտքէ ապրինք ձեր մասն, երբ որ նրա բերած փողը յետ տալ տուիք և դուք ինքներդ առաք նրանից առանձին ձեռագիր ձեր անունով ջնջելով հինք, և միուս կողմանէ կողկասեան ինտէնդանտսովոյի վրա մնացած 5200-ն համարելով ոչ թէ կորուստ, որի մասին ի միջի այլոց դուք եւս պէտքէ վճարէիք ի թեթեւութիւն ուսումնարանին, այլ իբր պարտք, որ ձեր կարծիքով պէտք է առաջ դուրս էինք եկել թողած գումարից եւ ապա մնացեալը ի վնաս դպրոցի տալ ուսումնարանին, ի յետեւումն որոյ ուրեմն պահանջումէիք դադաստանով 4865-ն. 71 կ. բացի Խարազովի փողից:

Բաւական չէ որ յարուցիք այս վեճերը, դուք աշխատեցիք եւս ոչ թէ արգելել մեզ կտակակատարների քի մեզ, Լ. Սիմոնեանցին եւ Գ. Տէր Սեդու-Յեւեանցին քաղաքից դուրս գնալը գրութեամբ պօլիցիայի ի 27-ն սեպտեմբերի 1866 թուին № 19,237, այլ եւ նշանակել ժամը մեր կայքերը վեր գրելու ձեր անիրաւացի պահանջողութեանց համար, ինչպէս նոյնպէս պարզ երևումէ մեր պօլիցիուց ստացած գրութեանից յ7-էն յունվարի 1866 ամի № 133: Գատաստանով դուք ստուեցաք, իսկ մենք ճշմարտութեանը: Ուրեմն մեզնից ուղ նուազացրեց ձեր ամուսնոյ յիշատակը—մենք, որոնք պահանջումէինք նրա կտակը ձրիաբար սրբութեամբ մինչև տաս տարի, թէ դուք դատաստաններ քաշելով նրա ընտրած եւ նրա յիշատակը պայծառացնող մարդիկներին: Եւ մեր անհերքելի ճշմարտութիւնը հասարակութեան առաջ, բայց մենք ձեզ ներումենք, որովհետեւ գիտենք, թէ ինչպէս է գրվել ձեր նամակը մեր դէմ:

Ի 4-ն գեկտեմբերի 1875 ամի

Տփլիս: Գր. Իզմիրեանց:

Дозволено цензурою. Тифлисъ ноябрю 1875 г.

Типография П. А. Чанцева и К.о.